ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՀԱՊՁԲ-15/1 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/01)» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

«19» «փետրվար» 2016թ.
ժամը 11 ^{00}

ք.Դիլիջան
Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝
Հ.Հարությունյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ**

Հանձնաժողովի անդամներ՝
Լ.Աբազյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան**

Գ. Վարդանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ավտոմեխանիկ, պահեստապետ-պարետի ժ/պ**

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Դիլանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ**

1. **«ՇՀԱՊՁԲ-15/1 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/01)» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի գնային առաջարկների արդյունքների ամփոփման) մասին.**

1.1. Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ Ք. Դիլիջան Թբիլիսյան խճուղի 2 հասցեում:**

1.2. **Գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը**

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը
«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն»	ք.Երևան, Պուշկինի 1	54-09-11

1.3. **Գնային առաջարկներ ներկայացրած այլ մասնակիցներ չկան**

1.4. **Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.**

1.4.1. «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.5. **Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

1.5.1. «ՇՀԱՊՁԲ-15/1 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/01)» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերությունը փակ կնքված ծրարով ներկայացրել էր ընթացակարգին մասնակցելու դիմում, հայտարարություն ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, մասնագիտական փորձառության, տեխնիկական միջոցների, ֆինասական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարություն, գնային առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված է մասնակիցի կողմից:

1.6. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

1.6.1. «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերությունների կողմից մրցույթի գնային առաջարի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.7. Մասնակիցների առաջարկած գները՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը/տառերով և թվերով/
1	Բենզին «Ռեգուլյար»	8,167,366.67	411,800.00	1,715,833,33	10,295,000 /տաս միլիոն երկու հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ
2	Դիզելային վառելիք	3,398,640	171,360	–	3,570,000 /երեք միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ

1.7.1. «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

1.8. Հանձնաժողովը որոշեց՝

1.8.1. «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

1.8.2. Ուղարկել հարցում ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «ՇՀԱՊՁԲ-15/1 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/01)» ծածկագրով մրցույթի բավարար գնահատված «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.8.3. Ծանուցել մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.9. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝

Հ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ.Աբազյան

Գ.Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան